ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1956 Общественные науки

ՀՈԴՎՈՐԴՈՒՄՆԵՐ

Հ. Ստեփանյան

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միքայել Նալբանդյանի ուղևորությունները ներկայացնում են խոշոր հետաքրքրություն և արժանի են մեծ ուշադրության։

Միքայել Նալբանդյանի մի շարք ուղևորությունները, որոնք ընդգրկել են շուրջ 14 տարի (1848—1862 թթ.)[1], դյուրին պատկերացնելու համար կարելի է պայմանական կերպով ստորաբաժանել մի քանի խմբավորումների. 1) 1848 թ. մինչև 1853 թ. Մ. Նալբանդյանը 19 տարեկան հասակից ուղևորություններ է կատարել Ռուսաստանի հարավում, 2) 1853 թ. մինչև 1859 թ. ընդգրկում է Ռուսաստանի գլխավոր կենտրոնները, 3) 1859 թ. մարտ ամսի վերջերից մինչև նույն թվականի հուլիսի կեսը, հազիվ չորս ամիս տևողությամբ. այդ ժամանակ Նալբանդյանը կատարել է իր առաջին ուղևորությունը արտասահման, դեպի Արևմտյան Եվրոպա և վերադարձը Ռուսաստան։ 4) 1860 թ. հունիսի կեսից մինչև նույն թվականի նոյեմբերի կեսը, ընդգրկում է մի ժամանակաշրջան, երբ Նալբանդյանը Հնդկաստան գնալու կապակցությամբ ուղևորություն է կատարել դեպի Կովկաս և Հայաստան։ 5) 1860 թ. նոյեմբերի կեսից մինչև 1862 թ. մայիսի վերջը, մոտավորապես մեկ տարի 7 ամիս տևողությամբ, երբ Նալբանդյանը կատարել է ուղևորություն դեպի Հնդկաստան, ինչպես և երկրորդ ու երրորդ ուղևորությունները դեպի Արևմտյան Եվրոպա (և վերադարձը Պետերբուրգ)։ 6) 1862 թ. հունիսի վերջերից մինչև նույն թվականի հուլիսի կեսը Նալբանդյանը Պետերբուրգից ուղևորություն է կատարել Նոր-Նախիջևան, որտեղ ձերբակալվել է և բանտարկության ուղարկվել։

Նախքան Միքայել Նալբանդյանի բուն ուղևորություններին դիմելը, հարկ ենք համարում նշել հետևյալը՝ չպետք է մոռացության տրվի, որ պատանի Միքայելը, սեր ունենալով դեպի բնությունը, իր մանկության տարիներում այցելել, դիտել է իր ծննդավայր Նոր-Նախիջևանին մոտիկ մի շարք վայրեր՝ Ռոստով խոշոր քաղաքը, Դոն գետի ստորին հոսանքի ափերը, նաև Նոր-Նախիջևանի շրջակայքի հայկական մի քանի գյուղեր. այսինքն կատարել է տեղական հայրենագիտական կամ գավառագիտական բնույթի ուղևորություններ։

Նալբանդյանի բուն ուղևորությունները սկսվել են 1848 թ. հուլիս ամսից. այդ ժամանակ նա աշխատել է Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական առաջնորդարանում որպես քարտուղար։ Քանի որ թեմը ընդգրկում էր մի ընդարձակ տերիտորիա, որի ծայրամասերն էին՝ արևելքում Նոր-Նախիջևանը (Դոնի ստորին հովտում) և արևմուտքում Քիշինև քաղաքը (Բեսարաբիայում, այժմյան Մոլդավական ՍՍՌ), ուստի և Նալբանդյանի ուղևորությունները ընդգրկում են Ռուսաստանի (և Ուկրաինայի) հարավային մասերը, Սև Ծովի առափնյա տարածությունները։

---

[1] *Այս հոդվածում կապմելիս հիմնականում օգտվել ենք Ա. Ինճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրություն» աշխատությունից։*

Այդ ժամանակամիջոցում Նալբանդյանը շատ անգամ է եղել Քիշինևում և Նոր-Նախիջևանում, մի քանի անգամ՝ Օդեսայում, մեկ անգամ՝ Խերսոնում. իսկ Ղրիմի քաղաքներից՝ մի քանի անգամ Թեոդոսիայում և Սիմֆերոպոլում։

1853 թ. հունիսի սկզբներին, երբ Մ. Նալբանդյանը եկել է Քիշինևից Նոր-Նախիջևան Գաբր. Պատկանյանի մոտ, կառքով շտապ մեկնել է Քիշինև ոստիկանական հետապնդումներից ազատվելու համար։ Քիշինև հասնելուց հայտնել է իշխանություններին. թե իբր գնալու է Իզմայիլ քաղաքը, սակայն նա իրոք մեկնել է Մոսկվա։

Մոսկվայում սկսվել է նրա ուղևորությունների նոր ժամանակաշրջանը (2-րդը), որը 1853 թ. հուլիսից տևել է մինչև 1859 թ. մարտ ամիսը։ Ապրելով Մոսկվայում, Նալբանդյանը մի քանի անգամ եղել է Պետերբուրգում։ Մոսկվայից Պետերբուրգ և Պետերբուրգից Մոսկվա ուղևորվել է «միշտ երկաթուղով»[1]։ Առաջին անգամ այցելել է Պետերբուրգը 1853 թ. և մնացել է այնտեղ երկու ամիս։ Այնուհետև 1856 թ. մեկնել է Մոսկվայից Պետերբուրգ «Հյուսիսափայլ» ամսագրի համար մայր տառեր ձեռք բերելու նպատակով և մնացել է այնտեղ ավելի քան երկու շաբաթ։ 1859 թ. Նալբանդյանը կրկին ուղևորվել է Մոսկվայից Պետերբուրգ և կրկին մնացել է այնտեղ մոտ երկու շաբաթ՝ քննչական մարմիններին բացատրություններ տալու «Հյուսիսափայլում» տպագրված իր ընդդիմադիր հոդվածների և ազատատենչ բանաստեղծությունների համար։ Այդ կապակցությամբ որոշում է մեկնել արտասահման։ Մինչ այդ, Նալբանդյանը, որ գիտեր դիտել և գնահատել բնության գեղեցկությունը, մի քանի անգամ եղել եր Մերձմոսկովյան անտառաշատ ամառանոցներում, Շերեմետևի գյուղում և այլուր։

Արտասահմանում սկսվում է Նալբանդյանի ուղևորությունների երրորդ ժամանակաշրջանը։ Արտասահմանում մոտ 4 ամսվա ընթացքում Նալբանդյանը եղել է մի շարք քաղաքներում. հիմնականում ապրել է Փարիզում, այցելել է Բեռլինը, եղել է Լոնդոնում, որտեղ մնացել է 1 ամիս։ Այդ ժամանակամիջոցում Նալբանդյանը այցելել է նաև Բրյուսելը (Բելգիայում), Գերմանիայի այլ քաղաքներն ու բուժավայրերը՝ Էմսը, Էսսենը, Զոդենը, Մայնի Ֆրանկֆուրտը և այլն. հավանաբար նաև Վիեննան ու Մարիենբադը Ավստրիայում։

1859 թ. սեպտեմբերին Նալբանդյանը Փարիզից Վարշավայով վերադարձել է Ռուսաստան։ Այդ ժամանակ սկսվել է Նալբանդյանի ուղևորությունների մի նոր էջը (չորրորդ ժամանակաշրջանը)։

Արտասահմանում Նալբանդյանը տեղեկացել էր, որ հնդկահայերը խոշոր ժառանգություններ են թողել Նոր-Նախիջևանի համար։ Նա գրել է՝ «Նպաստած կլինենք, որ մի նշանավոր գումար օտար պետությունից՝ Անգլիայից փոխադրվի Ռուսաստան՝ Նոր-Նախիջևան»։

1860 թ. հունիսի 15-ին Նալբանդյանը մեկնել է Պետերբուրգից Մոսկվա, ապա Նոր-Նախիջևան, ուր և տեղական հայ համայնքի կողմից պատվիրակ է ընտրվել Հնդկաստան գնալու համար։

Ուղևորության վարչական և պաշտոնական հարցերը լուծելու համար Մ. Նալբանդյանը 1860 թ. օգոստոս ամսին Նոր-Նախիջևանից մեկնել է Թիֆլիս, որտեղ մնալով մեկ շաբաթ, Կովկասի փոխարքայի դիվանատնից ստացել է

[1] Պետերբուրգ—Մոսկվա երկաթուղին առաջինն է եղել Ռուսաստանում և կառուցվել է 1839 թ.։

անհրաժեշտ անցագիրը. այնուհետև նույն թվականի սեպտեմբերի սկզբին Թիֆլիսից Լոռվա սարահարթի վրայով[1] մեկնել է էջմիածին, որտեղ մոտ մի ամիս մնալուց հետո, ստացել է երեսփոխանական թուղթը։ Այդ ժամանակամիջոցում Նալբանդյանը այցելել է Օշականը, Քանաքեռը, դիտել է Արարատյան դաշտի բնությունը, ի միջի այլոց ճիշտ դիտողություններ է արել Երևանի քամու մասին։ 1860 թ. հոկտեմբերի 15-ին Նալբանդյանը մեկնել է էջմիածնից Երևան, ապա Թիֆլիս. նոյեմբերի 1-ին Թիֆլիսից Փոթի։ Վերջապես 1860 թ. նոյեմբերի 13-ին Մ. Նալբանդյանը Փոթիի նավահանգստից ճանապարհվել է դեպի Հնդկաստան։

1860 թ. նոյեմբերի 14-ին Նալբանդյանը շոգենավով հասել է Բաթում[2]. այնուհետև, Տրապիզոնում կանգ առնելուց հետո, Բոսֆորի նեղուցով հասել է Կ. Պոլիս նոյեմբերի 20-ին։ Կ. Պոլսում մեկ ամիս մնալով, Նալբանդյանը մասնակցել է Պոլսի հայ հասարակական կյանքին։ Իր պատվիրակության նպատակը գլուխ բերելու համար չի մեկնել Պոլսից ուղղակի Հնդկաստան, այլ իր ուղևորության մարշրուտը դարձրել է դեպի Արևմտյան Եվրոպա, պարզելու գործը Լոնդոնում անգլիական իշխանության հետ։ Ուստի 1860 թ. դեկտեմբերի 21-ին Նալբանդյանը, օգտվելով այդ առիթից, հասարակական գործերի համար նորից գնացել է Արևմտյան Եվրոպա. շոգենավով նա մեկնել է դեպի Ֆրանսիայի նավահանգիստ Մարսելը. ճանապարհին Միջերկրական ծովում պատահած խիստ փոթորկի պատճառով, շոգենավը ստիպված կանգ է առել Սիցիլիա կղզու Մեսինա նավահանգստում, որտեղ Նալբանդյանը հանդիպել է Իտալիայի ազգային հերոս Գարիբալդիի բանակայիններին. Նալբանդյանը Մեսինայից մեկնել է Նեապոլ նավահանգիստը, այդտեղից էլ այցելել Հռոմը (դեկտ. 31-ին)։

1861 թ. հունվարի 3-ին Նալբանդյանը Նեապոլից նավով մեկնել է Ջենովա։ Այդտեղից երկաթուղով հասել է Ալպյան ձյունածածկ լեռների ստորոտը։ Տուրին քաղաքից Ալպերի բարձրադիր դժվարանցանելի լեռնանցքներով, մերթ ջորիով, մերթ սահնակով, մեծ նեղություններով մուտք է գործել Ֆրանսիա. այնուհետև կրկին երկաթուղով՝ Լիոն և Փարիզ, ապա Լոնդոն, որտեղ հազիվ 1861 թ. փետրվարի 22-ին անգլիական արտաքին գործերի ատյանը հաստատել է Նալբանդյանի պատվիրակության վկայականը։ Այդպիսով Նալբանդյանը Լոնդոնում մնացել է մինչև մարտի վերջը, սպասելով ձմռան վերջանալուն։ Այդ ժամանակամիջոցում մեկնել է Փարիզ, լույս ընծայելու իր հռչակավոր «Երկու տողը»։ Փարիզում Նալբանդյանը փորձել է պատվիրելու 1.500 օրինակ Փոքր Ասիայի մեծադիր (78×160 սմ) քարտեզը, սակայն գլուխ չի եկել։ Այդ ժամանակ Նալբանդյանը երեք անգամ այցելել է Փարիզը։

Վերջապես 1861 թ. ապրիլի 19-ին Նալբանդյանը Փարիզից մեկնել է, ուղևորվելով այս անգամ արդեն դեպի Հնդկաստան։ Երկաթուղով հասել է Մարսել, այդտեղից էլ նավով Միջերկրական ծովով՝ Ալեքսանդրիա նավահանգիստը Եգիպտոսում։ Քանի որ Սուեզի ջրանցքը դեռևս չէր կառուցվել[3], Նալբանդյանը ցամաքային ճանապարհով Կահիրեյով Սուեզ է հասել մայիսի սկզբին։

---

[1] Այլ ոչ Դեբեդի ձորով, քանի որ մինչև երկաթուղի կառուցելը այդ ձորով ոչ մի հանապարհ չի եղել։

[2] Բաթումը այդ ժամանակ Թյուրքիայի սահմաններում էր։

[3] Սուեզի ջրանցքի օգտագործումը սկսվել է 1869 թ. նոյեմբեր ամսից։

Այնուհետև մայիսի 13-ին հասել է Ադեն, մայիսի 22-ին Ցեյլոն, իսկ 27-ին՝ Մադրաս քաղաքը. այսինքն՝ Սուեզից Մադրաս ծովային տարածությունը շոգենավով անցել է 21 օրում։ Ի վերջո հունիսի 1-ին (հին տոմարով) հասել է Կալկաթա։ Նալբանդյանը Կալկաթայում մնացել է մինչև նույն թվականի սեպտեմբերի 27-ը, համարյա չորս ամիս։

1861 թ. սեպտեմբերի 27-ին Մ. Նալբանդյանը, հաջող ավարտելով հնդկահայերի՝ Նոր-Նախիջևանին կտակած գումարների հարցը, մեկնել է Կալկաթայից[1]։ 11 օրից հետո, հոկտեմբերի 8-ին հասել է Մադրաս նավահանգիստը։ Վերադարձի մասին օրացույցային տվյալները խախտված են. այնպես է ստացվում, իբր Նալբանդյանը Մադրասում մնալով մինչև հոկտեմբերի 23-ը, նույն ամսի 24-ին, այսինքն մեկ օրում հասել է Սուեզ, մի բան, որը կատարելապես անհնարին է։ Եթե Նալբանդյանը Կալկաթա գնալուց Սուեզից Մադրաս ծովային տարածությունը նավով անցել է 21 օրում, ապա վերադարձին նույն տարածությունը պետք է անցներ մոտավորապես նույնքան ժամանակում։ Ուրեմն, Նալբանդյանը ոչ թե Մադրասում է մնացել 15 օր, այլ այդ ժամանակամիջոցում եղել է ծովային ուղևորության մեջ, Սուեզ վերադառնալու ժամանակ։ Այնուհետև Նալբանդյանը մեկնել է հոկտեմբերի 27-ին Կահիրեից, 28-ին հասել է Ալեքսանդրիա. այդտեղից ծովով Միջերկրականի արևելյան ափերով Ալեքսանդրիայից Յաֆֆա և Ալեքսանդրետ գնալուց, 4—5 օրով անցել է Երուսաղեմ։ Շարունակելով ուղին, Ալեքսանդրետից մեկնել է Իզմիր և այնտեղից շոգենավով դեկտեմբերի 1-ին հասել է Պոլիս։ 27 օր Պոլսում մնալուց հետո, Նալբանդյանը գրական և հասարակական-ռևոլյուցիոն գործերով մեկնել է կրկին Արևմտյան Եվրոպա։ Այդ եղել է Նալբանդյանի երրորդ ուղևորությունը Արևմտյան Եվրոպա (ուր նա գնացել էր թե՛ մինչև Հնդկաստան մեկնելը և թե՛ Հնդկաստանից Ռուսաստան վերադառնալուց առաջ)։ Պոլսից մեկնելուց հետո, 7 օրվա ընթացքում, հունվարի 2-ին Նալբանդյանը հասել է Մարսել, ապա Փարիզ։ Նույն ամսի 8-ին մեկնել է Փարիզից և Կալէյով մեկ օրում, ամսի 9-ին հասել է Լոնդոն։ Մնալով Լոնդոնում մեկ ամսից ավելի, Նալբանդյանը երկու շաբաթով կրկին այցելել է Փարիզ։ Վերադարձին Լոնդոնում Նալբանդյանը մնացել է 40 օր և մի քանի կարևոր տեսակցություններ է ունեցել Ա. Գերցենի, Ն. Օգարյովի և Լոնդոնի մյուս ռուս ռևոլյուցիոն էմիգրանտների հետ։

Նալբանդյանը 1862 թ. ապրիլի 4-ին Լոնդոնից ճանապարհվել է Փարիզ, որտեղ մնալով մինչև մայիսի 25-ը, լույս է ընծայել իր հռչակավոր խոշոր աշխատությունը՝ «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»։ Նալբանդյանը 1862 թ. մայիսի վերջերին Փարիզից Բեռլինի և Վարշավայի ուղղությամբ վերադարձել է Պետերբուրգ և այդպիսով ավարտել իր երկարատև, հեռավոր և հետաքրքիր ճանապարհորդությունը։

Արտասահմանից Ռուսաստան վերադառնալուց հետո սկսվել է Նալբանդյանի ուղևորությունների վերջին փուլը։ Պետերբուրգում նա մնացել է մեկ ամիս՝ 1862 թ. մայիսի 25-ից մինչև հունիսի 25-ը։ Նալբանդյանը որոշել է մեկնել Նոր-Նախիջևան և այնտեղի հասարակությանը հաղորդել դեպի Հնդկաստան կատարած իր ուղևորության՝ պատվիրակության դրական արդյունք-

[1] Մ. Նալբանդյանը Հնդկաստանից մի ոնդեղջուր է նվիր ուղարկել Մոսկվայի կենդանաբանական այգու համար (Ռ. Գաբրիելյան։ Ռուս առաջադեմ բնագետ Կ. Ռուլիեն և Մ. Նալբանդյանը. Հայկական Մանկավարժական ինստիտուտի գիտ. աշխատությունների ժողովածու, № 1, Երևան, 1953)։

ները։ Մինչ այդ, Նալբանդյանը հայտարարություն է տվել Հայաստանի պատմական քարտեզի տպագրության, բնույթի և բաժանորդագրության պայմանների մասին. սակայն այդ ուշագրավ նախաձեռնությունը անկատար է մնացել։ Հունիսի 25-ին Նալբանդյանը Պետերբուրգից մեկնել է Մոսկվա, այդտեղից էլ անցել է Նոր-Նախիջևան, որտեղ նրան ջերմորեն դիմավորել է տեղական հայ հասարակությունը։ Բայց 1862 թ. հուլիսի 14-ին Նալբանդյանը ձերբակալվել է. նախ փոխադրվել է Եկատերինոսլավ քաղաքի (այժմյան Դնեպրոպետրովսկը Ուկրաինայում) բանտը, այնտեղից Մոսկվա և ապա Պետերբուրգ, որտեղ բանտարկվել է Պետրոպավլովսկի բերդում։

Նալբանդյանը Պետրոպավլովսկի բերդում մնացել է մինչև 1865 թ. մայիսի 13-ը, երբ աքսորվել է Կամիշին խուլ քաղաքը (Վոլգա գետի միջին հոսանքի աջ ափին)։ Հյուծված վիճակում Նալբանդյանը նոյեմբերի վերջերին փոխադրվել է Պետերբուրգից Մոսկվա—Ռյազան—Տամբով քաղաքների ուղղությամբ դեպի իր աքսորավայր Կամիշինը, որտեղ 4 ամիս մնալուց հետո հայ ժողովրդի մեծ զավակը մահացել է 1866 թ. մարտի 31-ին։

Ամփոփելով, պետք է ասել, որ Մ. Նալբանդյանը իր բոլոր ուղևորությունների ժամանակ եղել է երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի այն ժամանակվա տասնյակ պետություններում և երկրներում՝ Ռուսաստանում, Լեհաստանում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Ավստրո-Հունգարիայում, Թյուրքիայում, Եգիպտոսում, Արաբիայում, Հնդկաստանում, Ցեյլոնում և այլն. այցելել է ավելի քան 50 խոշոր և հայտնի քաղաքներ, որոնցից 20-ը նավահանգիստներ են։ Հիշած քաղաքներից ութը հիմնական հանգուցային վայրեր են և առավել նշանավոր են Մ. Նալբանդյանի կյանքում. դրանք են՝

— Նոր-Նախիջևանը (Ռոստովի հետ), Քիշինևը, Մոսկվան և Պետերբուրգը Ռուսաստանում.

— Փարիզն ու Լոնդոնը Արևմտյան Եվրոպայում.

— Կ. Պոլիսն ու Կալկաթան Ասիայում։

Նալբանդյանը շոգենավով ուղևորություններ է կատարել Ատլանտյան և Հնդկական օվկիանոսներում, Սև, Մարմարա, Էգեյան, Տիրենյան, Միջերկրական, Կարմիր, Արաբական ծովերում, Բենգալյան ծոցում. անցել է Լա-Մանշի և Պա-դե-Կալեյի, Բոսֆորի և Դարդանելի, Մեսինայի, Բաբ-ել-Մանդեբի և Փոլքի նեղուցներով։

14 տարվա ընթացքում Մ. Նալբանդյանն իր կատարած բազմաթիվ ուղևորությունների ժամանակ անցել է մոտավոր հաշվով ավելի քան 45 հազար կիլոմետր տարածություն, որից մոտավորապես 25 հազարը ծովով, այսինքն՝ մի ուղի, որը երկրագնդի հասարակածից էլ շատ ավելի է։ Այդպիսով Մ. Նալբանդյանը կարող է համարվել 19-րդ դարի հայ խոշոր ճանապարհորդ։

Միքայել Նալբանդյանի բազմապիսի ստեղծագործությունները, հարուստ գրական ժառանգությունը և հետաքրքիր ուղևորությունները ուսումնասիրության նյութ են տալիս ոչ միայն լեզվաբաններին, գրականագետներին, պատմաբաններին. փիլիսոփաներին, տնտեսագետներին, այլև աշխարհագետներին։